

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
Գիտական խորհրդի 03.11.2022 թվականի
նիստում (արձանագրություն N 02)

Խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Հիմք՝ ՇՊՀ հիմնադրամի Գիտական խորհրդի 07.01.2022 թ.
նիստում հաստատված ՇՊՀ զարգացման ռազմավարական
ծրագրի մշակման, իրականացման և
հաշվետվողականության հայեցակարգ

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԼԱՎԱՐԿՄԱՆ) ԵՎ
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման (լավարկման) և հաշվետվողականության ապահովման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ) սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) զարգացման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) մշակման (լավարկման), իրականացման արդյունքների վերահսկման ու բարելավման մեխանիզմները:

- 1.2. Սույն Հայեցակարգը մշակված է ՀՀ օրենսդրության, Հիմնադրամի կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերին համապատասխան:
- 1.3. Սույն Հայեցակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Հիմնադրամի Գիտական խորհրդի կողմից:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԾ-Ն ՄՇԱԿՈՂ (ԼԱՎԱՐԿՈՂ), ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՀՄԿՈՂ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՂ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- 2.1. Հիմնադրամի ՌԾ-ի մշակման (լավարկման), իրականացման արդյունքների վերահսկման և բարելավման աշխատանքային հանձնախումբը (այսուհետ՝ Հանձնախումբ) ձևավորվում է ռեկտորի հրամանով:
- 2.2. Հանձնախմբի նախագահը Հիմնադրամի ռեկտորն է:
- 2.3. Հանձնախմբի կազմի մեջ ի պաշտոնե ընդգրկվում են Հիմնադրամի պրոռեկտորները: Հանձնախմբում կարող են ընդգրկվել Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողական համակազմի և գործատուների ներկայացուցիչներ, շրջանավարտներ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԾ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 3.1 Հիմնադրամի զարգացման ռազմավարական պլանավորումը համապարփակ գործընթաց է, որը, շեշտադրելով Հիմնադրամի հեռանկարային ապագան, բուհի առաքելության շրջանակում համակցում է արտաքին միջավայրի պահանջներն ու ներքին ռեսուրսները՝ երկարաժամկետ նպատակներին հասնելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:
- 3.2 Հիմնադրամի զարգացման ռազմավարական պլանավորումն արտացոլվում է ՌԾ-ում, որը բովանդակում է՝

- 1) համառոտագիր,
- 2) առաքելություն,
- 3) տեսլական,
- 4) արժեքներ,
- 5) նպատակներ և խնդիրներ,
- 6) առաջարկվող լուծումներ,
- 7) կատարողականի ցուցիչներ:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԾ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

4.1 Հանձնախումբը մշակում է Հիմնադրամի ՌԾ-ի նախագիծը (երկարաժամկետ՝ հնգամյա)՝ նկատի ունենալով Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների զարգացման հեռանկարային առաջնահերթությունները, ինչպես նաև արտաքին և ներքին մյուս շահառուների և շահակիցների կարիքները:

4.2 Հանձնախմբի կողմից մշակված ՌԾ-ի նախագիծը ենթակա է քննարկման «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվող ներքին իրավական ակտերի փոփոխությունների, լրացումների, նախագծերի վերաբերյալ քննարկումների կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգով» սահմանված գործիքակազմով:

4.3 Հիմնադրամի ՌԾ-ի նախագիծը քննարկվում և հաստատվում է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդում: Հիմնադրամի հաստատված ՌԾ-ի հիման վրա մշակվում են Հիմնադրամի կենտրոնների և ~~ֆակուլտետների~~ (ըստ անհրաժեշտության՝ նաև կառուցվածքային այլ ստորաբաժանումների) զարգացման ծրագրերը **և/կամ աշխատանքային պլանները** և ~~ներկայացվում Հիմնադրամի Գիտական խորհրդի քննարկման և հաստատմանը:~~

4.4 ~~Ֆակուլտետների զարգացման ծրագրերի հիման վրա մշակվում են ամբիոնների զարգացման ծրագրերը, որոնք նախապես քննարկվում են~~

~~ամբիոնների նիստերում և ներկայացվում ֆակուլտետային խորհուրդների հաստատմանը:~~

4.5 Հիմնադրամի ՌԾ-ի իրականացմամբ պայմանավորված, ըստ անհրաժեշտության, կազմվում են նաև կառուցվածքային այլ ստորաբաժանումների միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլան-ժամանակացույցներ:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

5.1 ՌԾ-ի իրականացման վերահսկումը կարող է կատարվել մասնակի կամ համալիր՝ Հիմնադրամի շահառուների և շահակիցների շրջանում՝ կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների և/կամ հանձնաժողովների կողմից՝ ընտրովի կամ ծրագրային հիմքով՝ ռեկտորի համապատասխան հրամանով:

5.2 Հիմնադրամի կենտրոնները և ֆակուլտետները գործունեության ամենամյա հաշվետվություններում, որպես առանձին բաժին, ընդգրկում են իրենց զարգացման ծրագրերի կատարողականի ցուցիչների իրականացումը փաստող տվյալներ և վերլուծություններ, որոնց մասով Հանձնախումբի կողմից պատրաստվում է հարակից զեկույց:

5.3 Հանձնախումբը, հիմնվելով Հիմնադրամի Գիտական խորհրդի՝ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվություններին առնչվող որոշումների վրա, կազմում է ՌԾ-ի կատարողականի ամենամյա հաշվետվություն և ներկայացնում ռեկտորին: Հանձնախումբն ըստ անհրաժեշտության կարող է ռեկտորին ներկայացնել ՌԾ-ի բարելավման առաջարկություններ: